

ԿԱՐԻՆԵ ԽՈՂԻԿՅԱՆԻ «ՕՐԸ ԴԵՌ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է» ՊԻԵՍՈՒՄ ՖՐԻՊԱ ԿԱԼՈՅԻ ԻՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

ԼԻԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ

*ասպիրանտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան
«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամ
liana83ok@gmail.com*

ՀՏԴ՝ 8; 82-2; 347.786

DOI: 10.54503/1829-4278.2026.1-241

Անփոփագիր

Հոդվածում ներկայացվում է արդի հայ գրականության ժանրային ու թեմատիկ բազմազանության մեջ ուրույն ստեղծագործական ձեռագիր ունեցող բանաստեղծ, դրամատուրգ, հրապարակախոս և խմբագիր Կարինե Խողիկյանի «Օրը դեռ շարունակվում է (խաղ Ֆրիդայի և Դիեգոյի համար)» (2009 թ.) պիեսի տարածաժամանակային և գեղարվեստական-վերլուծական մոտիվը: Հեղինակն այն ստեղծագործողներից է, որի երկերը, նորարարական, բարոյահոգեբանական և համամարդկային թեմաներով առանձնանալով, բուռն գրական և թատերական կյանք են ապրում՝ միաժամանակ ժամանակակից հայ դրամատուրգիան ավելի հասանելի դարձնելով ընթերցող հասարակությանը: Բեմականացումներով երկրի սահմաններից դուրս ձանաչում գտած նրա դրամաները մեծապես նպաստել են թե՛ Խողիկյանի, թե՛ հայ արդի դրամատուրգիայի միջազգային հանրահռչակմանը: Հաշվի առնելով համաշխարհային գրականագիտական և գեղարվեստական կյանքում առկա զարգացումները, որոնց ակտիվ մասնակիցն է Կ. Խողիկյանը, նրա ստեղծագործության գիտական ուսումնասիրությունն ու հանրահռչակումը մեր օրերում դարձել է խիստ արդիական և անհրաժեշտ:

Մարդկային փոխհարաբերությունների դրամատիզմը գեղարվեստորեն է արտացոլվել «Օրը դեռ շարունակվում է (խաղ Ֆրիդայի և Դիեգոյի համար)» պիեսում: Հերոսուհի Ֆրիդայի կերպարը, որը մեքսիկացի հայտնի ինքնապատկերային նկարիչ է եղել և համաշխարհային ձանաչում ունեցող անձ, իրական ու երևակայական շերտերով ստանում է Խողիկյանին գեղարվեստին բնորոշ նորովի մեկնաբանություն: Պիե-

սի գործողությունները ծավալվում են մեքսիկական սրճարանում, որտեղ ներկայացվում են Ֆրիդայի և Դիեգոյի ընտանեկան-կենցաղային բարդ և իրական կյանքում չլուծված հարաբերությունները: Պիեսային երկխոսությունները պարբերաբար ընդհատվում են Ֆրիդա-Կերպարի՝ իրական և երևակայական կենսապատումային մենախոսություններով, որոնք խորագրված են՝ «Ցավ», «Կյանք» և «Մահ»: Դրանք ստեղծագործական սուբլիմացիայի մեջ գտնվող հերոսուհու հոգեբանական վիճակի դրսևորումներն են՝ արտացոլելով նրա միջավայրի և ժամանակի բարքերը: Պիեսը բեմադրվել է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Բանալի բառեր. Կարինե Խողիկյան, դրամատուրգիա, պիես, «Օրը դեռ շարունակվում է», խաղ, Ֆրիդա Կալո, «Ցավ», «Կյանք», «Մահ», իրական և երևակայական կերպար

Մուտք

Վերջին տասնամյակներում հայ ժամանակակից դրամատուրգիան ակտիվորեն ինտեգրվում է համաշխարհային մշակութային երկխոսությանը՝ վերինաստավորելով համաշխարհային և ընդհանրական նշանակություն ունեցող կերպարներ ու թեմաները: «Դրամատուրգիան խաղ է, մեծատառով ԽԱՂ: Դու ստեղծում ես մի բան, որ կա: Ասելիքդ տեղաբաշխում ես առանձին կերպարների միջև, և ամեն մեկի ասելիքը, ի վերջո, դառնում է ամբողջական տարածք»¹, – հարցազրույցներից մեկում ասել է Կ. Խողիկյանը: Այս համատեքստում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում նրա «Օրը դեռ շարունակվում է (խաղ Ֆրիդայի և Դիեգոյի համար)» պիեսը², որում ուրույն գեղարվեստական կերպավորում ունի 20-րդ դարի իկոն կին Ֆրիդա Կալոն և նրա ողբերգական ու ստեղծագործական կյանքը³:

¹ **Խողիկյան Կ.**, «Ես գիտեի՝ ո՞ր օրը մի կեղտոտ գործարքի խառնվեմ, այդ օրը չեմ գրի ու այլևս չեմ գրի» (հարցազրույց), *«Իրավունքը de facto»*, 26.05–28.05.2009 թ., թիվ 39 (99) էջ 11:

² **Խողիկյան Կ.**, Օրը դեռ շարունակվում է, *«Դրամատուրգիա» գրական-գեղարվեստական հանդես*, Երևան, 2010, թիվ 20–21, էջ 56–77, **Նույնի, Իմ դասականները (պիեսներ)**, Երևան, հեղ. Իրատ., 2011, էջ 153–182: Ի դեպ, հեղինակի այս ժողովածուն, որում ներառված է պիեսը, արժանացել է ՀԳՄ նախագահության «Տարվա լավագույն գիրք»՝ Լևոն Շանթի անվան մրցանակին (այդ մասին տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Պիեսներ գրողին գոնե «դրամատուրգիայի չեն ասում» (հարցազրույց Կարինե Խողիկյանի հետ), *«Առավոտ»*, 03.02.2012 թ., էջ 6): **Խողիկյան Կ.**, *Մեծ եռագրություն. թատերախաղեր (գիրք 2)*, Երևան, «ՎՄԿ» պրինտ, 2015, էջ 295–318:

³ Հետաքրքրական է, որ պիեսը 2018 թ. ԱՄՆ-ում բեմադրվել է նաև անգլերեն

Պիեսի վերնագիրը ինքնին ակնարկում է մարդու և նրա ստեղծագործության հարատևումը կյանքի հավերժական շրջափուլային ընթացքի մեջ: Երեք գործող անձինք՝ սրճարանի տիրուհին, Ֆրիդան և Դիեգոն, գեղարվեստական հավասարաչափ զարգացում չեն ապրում: Կենտրոնական դերակատարը Ֆրիդան է, որի մենախոսությունները և երկխոսություններն ամբողջությամբ բացահայտում են անձնական դրաման ու ստեղծագործական փիլիսոփայությունը՝ կենսահարատև «ապրելու իմաստը»՝ իկիզային, ավելի բնութագրական դարձնելով: Տեղին է մեջբերել գրականագետ Արմեն Ավանեսյանի հետևյալ բնութագիրը. «Կարծես թե անժամանակ ժամանակի թատերագիրն է Կարինե Խոդիկյանը, որովհետև նրա պիեսներում մարդկային հոգին է քարտեզագրված, տեղագրված»⁴:

Կ. Խոդիկյանը մետաֆիզիկական տարածության միջոցով ոչ միայն ստեղծել, այլև բացահայտել է Ֆրիդայի ինքնության հոգեբանական բարդ կառուցվածքն ու զոյաբանական էությունը: Այսինքն՝ գործողությունները տեղի են ունենում մահից հետո՝ անդրաշխարհում, որտեղ Ֆրիդայի «իրական» հանդիպումները թե՛ սրճարանի տիրուհու, թե՛ Դիեգոյի հետ իրապես վերածվում են հերոսուհու կյանքի ցավալի և ուրախ պահերի վերհուշի: Հենց այս դրամատիկ միջավայրում էլ լիարժեքորեն ի հայտ է գալիս Ֆրիդա Կալոյի ֆենոմենը: Խոդիկյանը, հավատարիմ լինելով թատրոնի և գրականության փոխառնչակցության և միահյուսման արվեստին, կերտել է ամուր գեղարվեստական նախահիմք՝ հավատարիմ մնալով գեղարվեստ-թատրոն երկխոսությանը և թատերագիտական տեսական բնորոշմանը. «Թատրոնը սիրում է ամուր գրական հիմք, բայց բեմադրության ընթացքում քանդում է գրական հիմքի շատ թելեր, չեզոքացնում իմաստային ինչ-ինչ շերտեր և գործին հաղորդում ուրիշ լարվածք: Հեղինակին ամենահարազատ մնացող բեմադրությունն էլ ունի իր սեփական տարերքը, ինքնուրույն լինելու իր իրավունքը...»⁵:

թարգմանությամբ (թարգ.՝ Արամազդ Ստեփանյան): Օտարալեզու արձագանքներում նշվել է, որ, չնայած «հայկական զգացմունքայնությանը»՝ ներկայացվող թեման ընկալելի է որպես համամարդկային դրամա (տե՛ս **Kouyoumdjian A.**, Theater Review: Khodikian script, Stamboltsyan performance Elevate “The day continues still”, “Asbarez” newsletter, June 29, 2018 // <https://asbarez.com/theater-review-khodikian-script-stamboltsyan-performance-elevate-the-day-continues-still/> (մուտք՝ 15.12.2025)):

⁴ **Ավանեսյան Ա.**, Լոր խաղին ընդառաջ կամ զգուշացե՛ք խաղը սկսվում է (Կարինե Խոդիկյանի թատերախաղերը). Տե՛ս **Խոդիկյան Կ.**, *Մեծ եռագրություն. թատերախաղեր (գիրք 1)*, Երևան, «ՎՄՎ» պրինտ, 2013, էջ 349:

⁵ **Հովհաննիսյան Հ.**, *Թատրոն. Հին և նոր արժեքներ*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 286:

Խոդիկյանի կերտած այս կերպարը տարբերվում է նրա այլ պատմվածքներում⁶, պիեսներում և դրամատիկ ստեղծագործություններում⁷ հայ կնոջ ինքնության, մասնավորապես՝ ազգապահպան և ընտանիքանվիրյալ կերպարներից: Ֆրիդայի անձը հեղինակից նոր գեղարվեստական ոգեշնչում է ստացել՝ ներկայանալով որպես առեղծվածային ինքնությամբ կին: Նրա անհատականությունը հետաքրքիր է, դեռ վերջնականորեն չբացահայտված, որն էլ Խոդիկյան-դրամատուրգի, նաև՝ օտար գրողների կողմից գեղարվեստական իրականի և երևակայականի նոր սինթեզի, եզրահանգումների ստեղծարար թեմա է դարձել:

Պիեսում Ֆրիդայի իրական կերպարի խոդիկյանական նկարագիրը

Կարելի է ասել, որ Կարինե Խոդիկյանի «Օրը դեռ շարունակվում է» դրամատիկական ստեղծագործությունը հերոսուհու՝ Ֆրիդա Կալոյի՝ «Ես ինձ եմ նկարում, քանզի շատ ժամանակ եմ անցկացնում մենակության մեջ և այն թեման եմ, որ ամենից լավ գիտեմ» խոսքի շուրջ է կառուցված: Եվ ահա այն հիմնավորումը, որ թեմատիկ բազմազանությամբ գրողը փորձել է վերիմաստավորել հերոսուհու կյանքում տեղի ունեցած ծանոթ իրական դրվագները, և, ինչու չէ, նաև երևակայական գեղարվեստական մոտեցում տալ դրանց:

Պիեսը գուրկ է դասական սյուժետային կառուցվածքից (սկիզբ-միջոց-գարգացում-ավարտ): Այն կառուցված է Ֆրիդայի հիշողությունների վրա, որոնք ներառում են թե՛ իրական կյանքի վերհուշեր և թե՛ երևակայական պատկերներ: Գրականագետ Գուրգեն Գասպարյանը, որը Խոդիկյանի ստեղծագործություններն անվանել է «փորձարարական դրամատուրգիա», նշել է. «Սա, անշուշտ, փորձարարական դրամատուրգիա է, քանի որ հեղինակը, արտաքնապես պահպանելով ժանրի խաղի կանոնները, ստեղծագործության ծավալման ժամանակային տիրույթում՝ նախադրությունից մինչև հանգուցալուծում, «ներսից» քայլ-քայլում է այդ կանոնները»⁸: Խոդիկյանը կերտել է պոստմոդեռնիստական գրականության չափանիշներին համապատասխան միջավայր և կերպար, որում արտացոլվում է ժամանակակից մարդու մասնատված և երևակայական գիտակցության վիճակը: Արարների ընթացքում գործողությունները պարբերաբար ընդմիջվում են Ֆրիդայի՝ ազատատենչ,

⁶ **Օհանյան Լ.**, Կարինե Խոդիկյանի «Պատմողը» պատմվածաշարը, *ՊԲՀ*, 2025, 1, էջ 127-135:

⁷ **Ohanyan L.**, Karine khodikyan's biographical and creative profile and the "Two Plays" collection, *International Review of Armenian studies*, 2025, 2, p. 146-157.

⁸ **Գասպարյան Գ.**, Փորձադաշտ արվեստի նվիրյալների համար, **Խոդիկյան Կ.**, *Իմ դասականները...*, էջ 3:

խելահեղ և ինքնամոռաց պարով: Այս տարրը, որը կարծես թե ավելի բնութագրական է հերոսուհու իրական կերպարին, միաժամանակ թեթևություն է հաղորդում գեղարվեստական թեմային և միջավայրին: Բնորոշիչ է թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանի այն մեկնաբանությունը, որ «Խաղի մեջ ձև է որոնում այն ամենը, ինչ մարդկային է՝ զգացմունք, միտք, երևակայություն, միստիկա, անգամ անհեթեթություն...»⁹:

Կ. Խողիկյանը, որը գեղարվեստական նորարարությունների հեղինակ է, փորձել է փակ տարածության մեջ գործողությունների ամբողջականություն ներկայացնել: Այսպես՝ մեքսիկական սրճարանում, որտեղ տեղին են ունենում գործողությունները, Ֆրիդայի անկաշկանդ պահվածքն անգամ տիրուհուն բարկացնելու առիթ է տալիս, որը բարձրաձայնում է՝ «...թույլ չեմ տա, որ հեքիաթներդ գրություն դառնան...»¹⁰:

Պիեռի սկզբում Ֆրիդայի իրական, բայց երևակայական դարձած կենսապատումային դրվագներն են պարզաբանվում և մեկնաբանվում, որոնք գեղարվեստական մոտիվներ ունեն. անգամ Ֆրիդայի ծննդյան տարեթվի փոփոխությունը, նրան կյանքի և մահվան ծիր հասցրած պատահարը, Պիեռոյի հետ ամուսնությունը, համատեղ կյանքի օրերն ու միջադեպերը: Բարձրաձայն մենախոսում է. «... Բայց մեղավոր էի, որ իմ ծնվելուց երեք տարի հետո միայն հեղափոխություն եղավ: Այն հեղափոխությունը, որին հավատացի, պայքարեցի, կյանքից մի մասը նվիրեցի նրան: Այնպես որ, ես պարտավոր էի ծնվել հեղափոխության տարում...» (էջ 59): Նաև. «... Նա (Պիեռոն – L. O.) հիացել է ինձնով, իմ նկարներով: Ես եղել եմ նրա սերը, սիրուհին, կինը... ներշնչել եմ ու ներշնչվել նրանով... անձնատուր եմ եղել՝ նվաճելով ու...» (էջ 60):

Շարունակելով վերապատմել իրական կյանքի միջադեպերը և դրանցից բխող հանգամանքները՝ Ֆրիդան նորից է ցավը զգում–ապրում: Նա փորձում է ընդհատել իրական և երևակայական ցավագար ապրումների շղթան և, ինչու չէ, բալլադ–պարի միջոցով թեթևանալ, երբեմն՝ տեկիլա խմել: Եվ այդ ծանր, բայց կենսազգա ապրումների մեջ ժամանակ առ ժամանակ տիրուհին «սատանայական կախարդանք» ունեցող Ֆրիդային հիշեցնել է տալիս իրական կյանքում նրա հաշվենկատ քայլերի (օրինակ՝ Պիեռոյի, Ֆրիդայի բնորոշմամբ՝ «դողդոշի» հետ ամուսնությունը)՝ բարձրաձայնած և թույլ տված վիրավորական արարքների ու արտահայտությունների մասին, որոնց Ֆրիդան հակադարձորեն ընդհատում է հումորով. «... ես իմացել եմ ինչ լինելս: Ով լինելս դրանից առաջ գիտեի...» (էջ 59):

⁹ Հովհաննիսյան Հ., *Գեղարվեստական ձևերի բովանդակությունը*, Երևան, «Գիտություն» հրատ., 2025, էջ 177:

¹⁰ Խողիկյան Կ., Օրը դեռ շարունակվում է, «Դրամատուրգիա» գրական–գեղարվեստական հանդես, թիվ 20–21, էջ 59: Այսուհետ պիեռից կատարված բոլոր մեջբերումներին կից տեքստում կնշվեն համապատասխան էջերը:

Ֆրիդայի կերպարը ցավի, կյանքի, մահվան իրական և երևակայական մենախոսությունում

«Օրը դեռ շարունակվում է» պիեսի թեմատիկան բազմաշերտ է՝ ընդգրկելով ցավի, կյանքի և մահվան ինքնության, արարման և գոյության խնդիրներ: Պետք է ասել, որ Խոդիկյանը Ֆրիդայի կերպարի միջոցով անդրադարձել է հոգեկան և ֆիզիկական ցավի հաղթահարման, սիրո և դավաճանության, ինչպես նաև՝ կյանքի և մահվան անխուսափելի թեմաներին: Ցավը Ֆրիդայի մենախոսություններում ներկայացվում է ոչ միայն ֆիզիկական տառապանք, այլև որպես գոյաբանական և արարման մղիչ ուժ, իր բառերով՝ «ցավի հետ պայման կապելով»: «Ես դեռ չգիտեի, որ կյանքիս մնացած օրերը պիտի լինեին անիծված սեպտեմբերի 17-ի (1925 թ. այդ օրն է եղել Ֆրիդայի հետ պատահած ավտովթարը – *L. O.*) շարունակությունը: Բայց արդեն գիտեի, որ ցավին չեմ կարող ոչնչացնել: Նրան պիտի հաղթեի նկարով» (էջ 63): Իսկ այդ իրական ցավը, որը հեղինակը երևակայական է պատկերում, նկարելու արժանի տեսարան է՝ «... ոսկին ու արյունը տասնութ տարեկան աղջկա մերկ մարմնին, իսկ մարմինը խոցված մետաղյա ձողով» (էջ 62), որը կյանքում ուղեկից է եղել Ֆրիդային: Սակայն նա երբեք չի ընկրկել, այլ կյանք վերադառնալու համար պայքարել է՝ վերագտնելով «պարզապես քայլելու և պարզապես ապրելու» ուրախությունը:

Կյանքի հերթական՝ անդրաշխարհային շրջափուլում ներկայացվում է Ֆրիդայի ու Դիեգոյի իրական, նաև հեղինակային-երևակայական երկխոսությունը: Անուսինը բացահայտում է, որ սիրելով հանդերձ՝ մեծ ցանկություն է ունեցել «նրան տանջելու»: Այս կրքի և ցավի միահյուսումը մեծացնում է պիեսի արարային հուզական լարվածությունն ու դրամատիզմը: Հերոսների հիշողությունների խճանկարում բավական իրական փաստեր շատ անգամ հասնում են երևակայական սահմանագծին, որին երբեմն իր ներկայությամբ ընդհատում է սրճարանի տիրուհին՝ մեկնաբանելով. «Այ, հենց էդպես էլ ստեղծեցիք ձեր սիրո հեքիաթը: Իսկ դա սեր չէր...» (էջ 66):

Կյանքի մենախոսության համատեքստում Խոդիկյանը Ֆրիդայի իրական կերպարին բնորոշ շատ հետաքրքիր ինքնախոստովանությամբ է սկսել. «Երեք մարդ եմ սպանել: Իմ երեք երեխաներին...» (էջ 70): Բայց և. «... ինձ շրջապատող մարդկանց վաղուց էի համոզել, որ եթե զալիս եմ մխիթարելու՝ մխիթարված պիտի գնան: Եթե զալիս եմ խնամելու՝ ապաքինված պիտի գնան: Ամենակարևորը՝ հուսալառված պիտի գնան, որովհետև ինչ վիճակում էլ որ լինեն՝ համեմատվելով ինձ հետ, իրենց առնվազն Աստծո սիրելի պիտի համարեն, իրենց երջանիկ պիտի զգան՝ տեսնելով ինձ...» (էջ 70-71), որը Դիեգոն բնութագրում է

որպես Ֆրիդային բնորոշ ուժ՝ առավել բնորոշիչ՝ սուբլիմացիա: Դիեգոն, որը պնդում էր, թե Ֆրիդայի հոգում «ընդամենը մի քանի քերծվածք» է թողել, իրականում նրանց տասնամյա ամուսնության ընթացքում պատճառել է մեծ ցավ ու բազում դավաճանություններ: Խոդիկյանի դրամատիկ մեկնաբանության ներքո Դիեգոն երևակայորեն վերհիմաստավորում է այս ամբողջ գոյությունը որպես ազատության ձգտում և ի վերջո հասնում ինքնախոստովանության. «Նրանից (Ֆրիդայից – *L. O.*) բացի ոչ մեկին չէի կարող սիրել: Այդպե՛ս սիրել» (էջ 72):

Կյանքի և մահվան վերջնական շրջափուլում Ֆրիդայի իրական կերպարը բարձրաձայն ինքնախոստովանում է՝ մեղանչելով կյանքում գործած մեղքերն ու արարքները: Նա իր մտորումները մշտապես սկսում է հետևյալ արտահայտչաձևով. «Մահ է, երբ...», իսկ վերջում եզրակացնում՝ այդքանից հետո «ի՞նչ մի մեծ բան է մահանալը»: Դիեգոն, լսելով կնոջ խոստովանությունը, այն որակում է որպես նարցիսի տիպիկ օրինակ: Խոդիկյանական անկոտրում կամք ունեցող իրական Ֆրիդան, որը կենսասեր դիմագիծ ունի, համարձակ է գտնվում ասելու. «Կինն ու տղամարդը մեր մեջ կռվել ու պարտվել էին. նման դեպքում ուրիշները բաժանվում են վերջնականապես: Բայց ո՛չ մենք...»: Կամ. «Մեր միջի նկարիչը մեզ սիամական երկվորյակ էր դարձրել՝ մեկիս հեռանալը երկուսիս մահը կլինե՞ր...» (էջ 75): Հերոսուհին իր և ամուսնու համատեղ կյանքը բնութագրում է իբրև «Քեզ հետ չեմ կարող, առանց քեզ՝ առավել ևս» խորագրային կոմեդիա, որը, Դիեգոյի բնորոշմամբ, տրագեդիա է: Եվ այս հակադրությունը բնական է, քանի որ նրանք արժանի էին միմյանց՝ խաղալով իրենց կյանքը՝ իբրև իրական և երևակայական «հեքիաթ»:

«Օրը դեռ շարունակվում է» պիեսի վերջնավարտին Կ. Խոդիկյանի իրական և երևակայական հերոսուհի Ֆրիդան, որն արդեն անցել է ցավի և մահվան շրջափուլերը, շնորհակալություն է հայտնում կյանքին: Նա ընդգծում է, որ կյանքը հնարավոր չէր լինի հորինել, եթե չլինեին իր՝ հավերժ հիշեցնող կտավները: «...Օրը դեռ չի ավարտվել, օրը դեռ շարունակվում է...», – բացականչում է նա և սկսում ինքնամոռաց պարել:

Եզրակացություն

Այսպիսով՝ Կարինե Խոդիկյանի «Օրը դեռ շարունակվում է» պիեսը ոչ միայն կենսապատումային դրամա է, այլև էքզիստենցիալ պիես՝ սահմանային իրավիճակում գտնվող մարդու, նրա ցավի հիվանդագին կենսագոյության մասին, որտեղ իրական կերպարը նաև հեղինակային-երևակայական մոտիվներ ունի: Կարելի է ասել, որ այն հայ դրամատուրգիան դուրս է բերում լոկալ խնդիրներից՝ համադրելով

համաշխարհային մշակութային թեմատիկ և մինչ այսօր գեղարվեստական նորարանություններ արարող արվեստաստեղծ իրողությանը:

Գլխավոր կերպարը՝ Ֆրիդան, հավերժական պայքարի մարմնացում է՝ պայքար մարմնի և ոգու, սիրո և անկախության, անցյալի և ներկայի միջև: Նրա միջոցով Խոդիկյանը հարցադրում է կատարել մարդկային գոյության ամենաբուն էության մասին՝ ցույց տալով, որ նույնիսկ ամենամեծ կորստի ժամանակ կյանքը, ցավով հանդերձ, պետք է շարունակվի:

THE REAL AND THE IMAGINARY REPRESENTATION OF FRIDA KAHLO IN KARINE KHODIKYAN'S PLAY THE DAY STILL CONTINUES

LIANA OHANYAN

PhD student

*Kh. Abovian Armenian State Pedagogical University
“Visual Armenia” Development Foundation*

Abstract

The article examines the spatio-temporal and artistic-analytical motifs in Karine Khodikyan's play “The Day Still Continues (A Play for Frida and Diego)” (2009). Khodikyan, a poet, playwright, publicist, and editor with a distinctive creative signature within the genre and theme-rich landscape of contemporary Armenian literature, is among those authors whose works—marked by innovation, moral-psychological depth, and universal concerns—have found vibrant resonance in literary and theatrical life. Her dramas, staged both in Armenia and abroad, have significantly contributed to the international recognition of modern Armenian dramaturgy and Khodikyan herself. In light of ongoing developments in global literary and artistic discourse, of which Khodikyan is an active participant, the scholarly study and dissemination of her oeuvre has become both timely and necessary.

The play “The Day Still Continues” artistically reflects the dramatism of human relationships. The character of Frida, the renowned Mexican self-portraitist of worldwide fame, is reinterpreted by Khodikyan through a blend of real and imaginary layers, offering a novel artistic perspective. The action unfolds in a Mexican café, where the unresolved domestic and personal tensions between Frida and Diego are staged. The dialogues are periodically interrupted by Frida's autobiographical monologues—both real and imagined—structured under the headings “Pain”, “Life” and “Death”. These monologues embody the psychological state of a heroine immersed in creative sublimation, while simultaneously reflecting the ethos of her milieu and era. The play has been staged both in Armenia and internationally.

Keywords: Karine Khodikyan, playwright, play, The Day Still Continues, Frida Kahlo, “Pain”, “Life”, “Death”, real and imaginary character

РЕАЛЬНЫЙ И ВОООБРОЖАЕМЫЙ ОБРАЗ ФРИДЫ КАЛО В ПЬЕ- СЕ КАРИНЕ ХОДИКЯН «ЕЩЕ ПРОДОЛЖАЕТСЯ ДЕНЬ»

ЛИАНА ОГАНЯН

*аспирант
Армянский государственный педагогический
университет им. Хачатуря Абовяна
Фонд развития «Визуальная Армения»*

Аннотация

В статье рассматриваются пространственно-временные и художественно-аналитические мотивы пьесы «Еще продолжается день», автором которой является поэт, драматург, публицист и редактор Карине Ходикян. Творческий почерк драматурга занимает особое место в жанровом и тематическом разнообразии современной армянской литературы. Она относится к числу тех драматургов, произведения которых, отличаясь своими новаторскими, морально-психологическими и общечеловеческими темами и будучи широко востребованными в литературной и театральной жизни, приобщают читающую общественность к современной армянской драматургии. Ее драмы, получившие известность за пределами нашей страны, во многом способствовали международной популяризации как автора, так и современной армянской прозы в целом. Исходя из современных процессов развития мировой художественной литературы и литературоведения, в которых активно участвует Карине Ходикян, научное изучение ее творчества актуально и необходимо.

Драматизм человеческих взаимоотношений нашел художественное воплощение в рассматриваемой нами пьесе. Образ героини – Фриды – известной мексиканской художницы с мировым признанием, по-новому интерпретируется драматургом К. Ходикян. Действие пьесы разворачивается в мексиканской кофейне, представляя сложные и неразрешимые семейно – бытовые отношения Фриды и Диего. Диалоги в пьесе периодически прерываются реальными и воображаемыми монологами Фриды, озаглавленными «Боль», «Жизнь» и «Смерть». Они являют собой отражение психологического состояния героини, переживающей творческую сублимацию, демонстрируя нравы ее среды и времени в целом. Пьеса была поставлена как в Армении, так и за рубежом.

Ключевые слова: Карине Ходикян, драматургия, пьеса, «Еще продолжается день», игра, Фрида Кало, «Боль», «Жизнь», «Смерть», реальный и воображаемый образ

Գրականության ցանկ

1. **Ավանեսյան Ա.**, Նոր խաղին ընդառաջ կամ զգուշացնք խաղը սկսվում է (Կարինե Խողիկյանի թատերախաղերը), *Խողիկյան Կ., Մեծ եռագրություն. թատերախաղեր (գիրք 1)*, Երևան, «ՎՄՎ» պրինտ, 2013:
2. **Գասպարյան Գ.**, Փորձադաշտ արվեստի նվիրյալների համար, *Խողիկյան Կ., Իմ դասականները (պիեսներ)*, Երևան, հեղ. հրատ., 2011:
3. **Խողիկյան Կ.**, «Ես գիտեի՝ որ օրը մի կեղտոտ գործարքի խառնվեմ, այդ օրը չեմ գրի ու այլևս չեմ գրի» (հարցազրույց), *«Իրավունքը de facto»*, 26.05–28.05.2009 թ., թիվ 39 (99) էջ 11:
4. **Խողիկյան Կ.**, Իմ դասականները (պիեսներ), Երևան, հեղ. հրատ., 2011: ներդիր:
5. **Խողիկյան Կ.**, *Մեծ եռագրություն. թատերախաղեր (գիրք 2)*, Երևան, «ՎՄՎ» պրինտ, 2015:
6. **Խողիկյան Կ.**, Օրը դեռ շարունակվում է, *«Դրամատուրգիա» գրական-գեղարվեստական հանդես*, 2010, թիվ 20–21, էջ 56–77:
7. **Հովհաննիսյան Հ.**, *Գեղարվեստական ձևերի բովանդակությունը*, Երևան «Գիտություն» հրատ., 2025:
8. **Հովհաննիսյան Հ.**, *Թատրոն. Հին և նոր արժեքներ*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
9. **Հովհաննիսյան Ն.**, Պիեսներ գրողին գոնե «դրամատուրգուի չեն ասում» (հարցազրույց Կարինե Խողիկյանի հետ), *«Առավուր»*, 03.02.2012 թ., էջ 6:
10. **Օհանյան Լ.**, Կարինե Խողիկյանի «Պատմողը» պատմվածաշարը, *ՊԲՀ*, 2025, 1, էջ 127–135:
11. **Kouyoumdjian A.**, Theater Review: Khodikian script, Stamboltsyan performance Elevate “The day continues still”, “Asbarez” newsletter, June 29, 2018 // <https://asbarez.com/theater-review-khodikian-script-stamboltsyan-performance-elevate-the-day-continues-still/> (մուտք՝ 15.12.2025).
12. **Ohanyan L.**, Karine khodikyan’s biographical and creative profile and the “Two Plays” collection, *International Review of Armenian studies*, 2025, 2, p. 146–157.

Ընդունվել է՝ 18.01.2026
Գրախոսվել է՝ 22.02.2026
Հանձնվել է տպ.՝ 26.06.2026